

**«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

**«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ռեկտոր**



Հ.Թորքմաջյան

« 12 » 06 2020 թ.

ՊՐՈՊՈՍԵՊՏ

ԱԽՏԱՀԱՆՈՂ ԵՎ ՄԱՆՐԷԱՍՊԱՆ ՄԻՋՈՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Տեխնիկական պայմաններ

ԿՍՏ 82044984.01-2020

Գործարկվում է առաջին անգամ

Գործարկման թվականը __12.06.2020__

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտը տարածվում է Պրոպոսեպտ ախտահանող և մանրէասպան միջոցի (այսուհետև՝ միջոց) վրա, որը նախատեսված է ձեռքերի, բռնակների և հարթ մակերեսների ախտահանման համար:

Միջոցը օժտված է հակամանրէային և ախտահանիչ ակտիվությամբ մանրէների և տարբեր վիրուսների նկատմամբ:

2 Նորմատիվ վկայակոչումներ

2.1 Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀՍ 124-2007 Իրեր պլաստմասսայե. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

ՀՍ ԻՍՕ 780-2010 Փաթեթավորում. Բեռների վարվելակարգային գրաֆիկական մակնշում

ԳՕՍ 12.1.005-88 ԱԱՀՍ. Աշխատանքային գոտու օդին ներկայացվող ընդհանուր սանիտարա-հիգիենիկ պահանջներ

ԳՕՍ 12.3.002-75 ԱԱՀՍ. Արդյունաբերական պրոցեսներ. Անվտանգության ընդհանուր պահանջներ

ԳՕՍ 12.4.011-89 ԱԱՀՍ. Աշխատողների պաշտպանման միջոցներ. Ընհանուր պահանջներ և դասակարգում

ԳՕՍ 5962-2013 Սպիրտ էթիլային ռեկտիֆիկացված սննդային հումքից. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 6709-79 Ջուր թորած. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 6824-96 Գլիցերին. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 13511-2006 Արկղեր ծալքավոր սովարաթղթից սննդամթերքի, լուծկու, թուփունի և լվացող միջոցների համար. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 14192-96 Բեռների մակնշում

ԳՕՍ 29188.2-91 Օժանելիքա-կոսմետիկական արտադրանք. Ջրածնային ցուցիչի որոշման մեթոդ

ԳՕՍ 28886-90 Պրոպոլիս.Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 29188.6-91 Օժանելիքա-կոսմետիկական արտադրանք. Էթիլ սպիրտի գազըքրոմոտագրաֆիկ որոշման մեթոդ

3 Տեխնիկական պահանջներ

3.1 Միջոցը պետք է համապատասխանի սույն ստանդարտի պահանջներին և պատրաստվի ըստ սահմանված կարգով հաստատված բաղադրագրի՝ պահպանելով սանիտարական նորմերն ու կանոնները:

3.2 Միջոցը պետք է ունենա ստուգանմուշ, հաստատված արտադրողի կողմից:

3.3 Զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշներով միջոցը պետք է համապատասխանի 1 աղյուսակում բերված բնութագրերին և նորմերին:

Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը և նորմը
Արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ, առանց կողմնակի ներխառնուկների
Գույնը	Անգույնից մինչև բաց դեղնավուն, դարչնագույն
Հոտը	Էթիլ սպիրտի և օգտագործվող հումքին բնորոշ թույլ հոտով
Ջրածնային իոնների խտությունը, рН	5,5-7,5
Էթիլ սպիրտի զանգվածային մասը, %, ոչ պակաս	70,0

3.4 Հումքին և նյութերին ներկայացվող պահանջները

3.4.1 Միջոցի պատրաստման համար օգտագործվում են հետևյալ հումքը և նյութերը.

- Էթիլ սպիրտ 96%-ոց ըստ ԳՕՍՏ 5962,
- գլիցերին ըստ ԳՕՍՏ 6824,
- մաքրված ջուր ըստ նորմատիվ փաստաթղթի կամ թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709,
- պրոպոլիսի սպիրտային էքստրակտ 20% ըստ նորմատիվ փաստաթղթի,
- համեմի յուղ ըստ նորմատիվ փաստաթղթի,
- օշինդրի սպիրտային էքստրակտ 20%

3.5 Փաթեթավորում

3.5.1 Միջոցը չափաճրարվում է 20 մլ, 60 մլ, 100 մլ, 150 մլ տարողությամբ պոլիմերային տարաներով կամ 5,0 և տարողությամբ կանխատրաններով ըստ ՀՍՏ 124:

3.5.2 Սպառողի համաձայնությամբ թույլատրվում են այլ տարողության և այլ տեսակների տարաներ, որոնք ապահովում են արտադրանքի պահպանվածությունը և թույլատրված են առողջապահության մարմինների կողմից:

3.5.3 Չափաճրարված միջոցը տեղադրվում է ծալքավոր ստվարաթղթե արկղերի մեջ ըստ ԳՕՍՏ 13511:

3.5.4 Սպառողական տարաներում չափաճրարված միջոցի զտաքաշի թույլատրելի բացասական շեղումները չպետք է գերազանցեն կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1928-Ն որոշմամբ հաստատված «Կշռաճրարման, վաճառքի, ներմուծման ժամանակ ցանկացած տիպի փաթեթվածքներում չափաճրարված ապրանքների քանակին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

3.5.5 Փաթեթավորումը և տարայի տեսակը պետք է ապահովեն արտադրանքի պահպանվածությունը:

3.5.6 Փաթեթավորումը և տարայի տեսակը պետք է համապատասխանի ՄՄ ՏԿ 005/2011 «Փաթեթավորման անվտանգության մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

3.6 Մակնշում

3.6.1 Միջոցի յուրաքանչյուր սպառողական միավոր պետք է լինի մակնշված:

3.6.2 Մակնշումը պետք է պարունակի հետևյալ տվյալներ՝

- արտադրողի անվանումը, ապրանքանիշը (առկայության դեպքում), հասցեն,
- արտադրանքի անվանումը,
- նշանակումը,
- բաղադրությունը,
- զտաքաշը,
- արտադրման թվականը,
- պիտանելիության ժամկետը,
- պահման պայմանները,
- ցուցումներ օգտագործման մասին,
- վարվելակարգային նշաններ,
- գծիկային կոդը (անհրաժեշտության դեպքում),
- սույն ստանդարտի նշագիրը:

3.6.3 Փոխադրական մակնշումը ըստ ՀՍՏ ԻՍՕ 780 (ԳՕՍՏ 14192):

3.6.4 Մակնշումը կատարվում է հայերենով կամ հայերեն և այլ լեզուներով, իսկ արտահանման դեպքում՝ պայմանագրում նշված լեզվով:

4 Անվտանգության պահանջներ

4.1 Միջոցի պատրաստման ժամանակ պետք է պահպանվեն արդյունաբերական սանիտարական կանոնները և անվտանգության ընդհանուր պահանջները ըստ ԳՕՍՏ 12.3.002:

4.2 Միջոցը թունավոր չէ: Բոլոր հումքերը և նյութերը, որոնք օգտագործվում են միջոցի պատրաստման համար թույլատրված են առողջապահական մարմինների կողմից:

4.3 Վնասակար նյութերի պարունակությունը չպետք է գերազանցեն առավել թույլատրելի խտությունը (ԱԹԽ) և աշխատանքային գոտու միջավայրում պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 12.1.005 ստանդարտի պահանջներին:

4.4 Արտադրության հետ կապված անձիք պետք է ունենան համապատասխան որակավորում և ապահովված լինեն արտահագուստով և անհատական պաշտպանության միջոցներով ըստ ԳՕՍՏ 12.4.011:

5 Ընդունման կանոններ

5.1 Միջոցը ընդունում է խմբաքանակներով:

Խմբաքանակ է համարվում պատրաստի արտադրանքի այն քանակը, որը պատրաստվել է նույն հումքից, ունի միևնույն որակական ցուցանիշներ և ձևակերպված է մեկ որակի փաստաթղթով, որտեղ նշվում է՝

- արտադրողի անվանումը, ապրանքանիշը (առկայության դեպքում), հասցեն,
- արտադրանքի անվանումը,
- նշանակումը,
- բաղադրությունը,
- զտաքաշը, համաքաշը,
- տարայի տեսակը,
- արտադրման թվականը,
- պիտանելիության ժամկետը,

- պահման պայմանները,
- սույն ստանդարտի նշագիրը:

5.2 Միջոցի որակը ստուգելու համար պատահական ընտրության եղանակով կատարվում է նմուշառում՝ ոչ պակաս, քան 3 հատ սպառողական միավոր: Ընտրված նմուշներից կազմում են միջին նմուշ՝ ոչ պակաս 150 մլ-ից:

5.3 Գոնե մեկ ցուցանիշով անբավարար արդյունք ստանալու դեպքում կատարվում է այդ ցուցանիշի կրկնակի ստուգում՝ նույն խմբաքանակից կրկնակի քանակով ընտրված նմուշի վրա:

Կրկնակի ստուգման արդյունքները վերջնական են և տարածվում են ամբողջ խմբաքանակի վրա:

6 Վերահսկման մեթոդներ

6.1 Արտաքին տեսքը և գույնը որոշում են արտաքին զննման եղանակով:

Միջոցը տեղադրում են անգույն ապակուց փորձանոթի մեջ և զննում բնական լույսի տակ՝ համեմատելով ստուգանմուշի հետ:

6.2 Հոտը որոշում են զգայորոշմամբ:

6.3 Ջրածնային իոնների խտությունը (pH) որոշում են ըստ ԳՕՍՏ 29188.2:

6.4 Էթիլ սպիրտը զանգվածային մասը որոշում են ըստ ԳՕՍՏ 29188.6 կամ գազաքրոմատոգրաֆիկ եղանակով:

7 Փոխադրում և պահում

7.1 Միջոցը թույլատրվում է փոխադրել փոխադրամիջոցի բոլոր տեսակներով՝ փոխադրամիջոցի տվյալ տեսակի բեռների տեղափոխման կանոնների համաձայն:

7.2 Փոխադրումը պետք է ապահովի արտադրանքի պահպանվածությունը:

7.3 Միջոցը պահում են չոր շինություններում՝ 5°C-ից ոչ ցածր և 25 °C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

7.4 Միջոցը պետք է պահվի ջեռուցման սարքերից հեռու և պաշտպանվի արևի ճառագայթների անմիջական ազդեցությունից:

8 Արտադրողի երաշխիքները

8.1 Արտադրողը երաշխավորում է միջոցների համապատասխանությունը սույն ստանդարտի պահանջներին՝ փոխադրման և պահման պայմանները կատարելու դեպքում:

8.2 Պիտանիության ժամկետը սահմանվում է 24 ամիս արտադրման օրվանից: